

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՄԻՋՈՑ

Հեղինակ՝ Նաիրա Սարգսյան

Սյունիքի մարզ

Ագարակի միջնակարգ դպրոց

Ղեկ՝ Ա. Հարությունյան

Իրականացնող կազմակերպություն՝

Կապանի թիվ 2 ավագ դպրոց

2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1.ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ	4
2.ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ Ա ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	7
3.ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԹՐԵՅՆԻՆԳ ԾՐԱԳԻՐ	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կյանքի առաջընթացն այսօր յուրաքանչյուր մասնագետից պահանջում է շարունակական ինքնազարգացում և ստեղծագործական մոտեցում: Կրթական համակարգում տեսագործական կապի ապահովումը նպաստում է կրթության և կյանքի միջև փոխգործակցությանը, որն այսօր արդյունավետորեն կարող է իրագործվել ակտիվ ուսումնառությամբ և նորարար տեխնոլոգիաների կիրառմամբ:

Ժամանակակից կրթական հարացույցում սովորողների անհատականության ձևավորման գործընթացը նախատեսում է ինտեգրում կրթական տարբեր ոլորտներ և արտադպրոցական միջոցառումներ: Կրթական չափորոշիչների մեջ ներդրված հոգեբանամանկավարժական գաղափարների համատեքստում այսօր պահանջվում է՝ ճանաչողական, հաղորդակցական, շտկողական բնույթի ճկուն և ստեղծագործ կրթական գործողությունների ձևավորում: Վերոնշյալը ժամանակակից դպրոցին պարտավորեցնում է ստեղծելու կրթության որակի զարգացման համար բարենպաստ կենսամիջավայր, կենտրոնացում անհատի հոգեբանական ռեսուրսների բարելավմանը՝ զարգացման մակարդակ, արդյունավետ մտածողություն, ստեղծագործականություն և այլն: Ժամանակակից դպրոցներում այս տեսանկյունից արդյունավետ է հանդիսանում նախագծային աշխատանքների իրագործումը, սակայն մինչ այժմ մանկավարժական ներուժը և կազմակերպչական գործընթացը հիմնվում են առավելապես բանավոր մեթոդներին: Խնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական գրականության վերլուծությունը, մանկավարժական փորձի, գործունեության ուսումնասիրությունը պահանջ է առաջադրում ինքնուրույն –ստեղծագործական գործունեության զարգացման՝ տեսագործական կապի ապահովման միջոցով, որտեղ արդյունավետ կարող են լինել նախագծային աշխատանքները, ինչով և պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը:

Աշխատանքի **նպատակն է** նախագծային աշխատանքի՝ որպես ուսուցման արդյունավետ միջոցի ուսումնասիրումը:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները՝**

- վերլուծել նախագծային մեթոդը որպես ստեղծագործական մտածողության զարգացման և ուսուցման արդյունավետ միջոց.
- հետազոտել նախագծային մեթոդի որպես ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործընթացը:

1. Նախագծային ուսուցումը որպես ստեղծագործական մտածողության զարգացման արդյունավետ միջոց

Նախագծի մեթոդը առաջացել է 19-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ում: Այն հիմնված էր ամերիկացի փիլիսոփա և ուսուցիչ Դ.Դյուևի (1859-1952) պրագմատիկ գաղափարներին: Դյուևի դպրոցի իրավահաջորդը՝ ամերիկացի ուսուցիչ Վ.Խ. Կիլպատրիկը դրեց նախագծի մեթոդի տեսության հիմքերը: Նախագծային ուսուցման տեսության հիմքերը մշակվել են նաև՝ Վ.Վ. Ռուբցովայի, Վ.Դ. Սիմոնենկոյի, Ն.Վ. Մատյաշի և այլոց կողմից:

Նախագծային ուսուցման տեսությունը հիմնված է ժամանակակից տեխնոլոգիական աշխարհում նախագծային մտածողության ձևավորման, մանկավարժական գործընթացի ամբողջականության (զարգացման, վերապատրաստման և կրթության միասնության) ապահովման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար պայմաններ ստեղծելու անհրաժեշտության մասին գաղափարներին [Технология проектов в профессиональной деятельности педагога 18.01.2018; 19.24]:

Նախագծային մեթոդը սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման և ինքսարտահայտման հնարավորության ընդունման լավագույն մեթոդներից է: Մեթոդի շնորհիվ աշակերտներին փոխանցվում է ինքնուրույնություն, որի շնորհիվ նրանք կարողանում են իրենց տեսական գիտելիքները հաջողությամբ կիրառել գործնականորեն, կողմնորոշվել տեղեկատվական տարածության մեջ, անընդմեջ ինքնակրթվել, զարգացնել քննադատական և ստեղծագործական մտածողությունը: Նախագծային ուսուցումը նպաստում է նաև խնդիրը տեսնելու, ձևակերպելու և լուծելու ունակություններին: Սովորողների ընտելացումը գիտահետազոտական որոնողական գործունեությանը՝ հանդիսանում է ժամանակակից դպրոցում լավագույն ձևերից մեկը, որը թույլ է տալիս առավել լիարժեքորեն բնորոշելու և զարգացնելու ինչպես մտավոր, այնպես էլ պոտենցիալ ստեղծագործական ունակությունները յուրաքանչյուրի մոտ անհատապես [Նավասարդյան 2008, էջ 54-56] Արդյունավետության տեսանկյունից դիտարկելիս՝ յուրաքանչյուր նախագծի արժեքայնությունը կայանում է նրանում, որ գործնականորեն համարյա բոլոր գիտելիքները սովորողները ձեռք են բերում ինքնուրույն կամ խմբային շփման միջոցով: Գիտական գործունեությունը թույլ է տալիս ձևավորելու ստեղծագործական անձի, խթանում է որոնողական ակտիվությանը, հաստատակամ է դարձնում սովորողներին առաջադրված

Նպատակի ձեռքբերման մեջ: Նախագծային ստեղծագործական գործունեության մեջ յուրաքանչյուր սովորողի մոտ առաջանում է իրենց որոնումների և արդյունքների հետ կիսվելու պահանջմունք: Արդյունքում սովորողների մոտ զարգանում են կազմակերպչական առաջնորդման ունակություններ և հմտություններ [Солдатова 2000, с.17]:

Նախագծային աշխատանքները մանկավարժի կողմից հատուկ կազմակերպված և սովորողի կողմից ինքնուրույն իրականացվող համալիր գործողություններ են, որտեղ սովորողները կարող են լինել ինքնուրույն որոշումների ընդունման մեջ և պատասխանատու սեփական ընտրության, աշխատանքի արդյունքի, ստեղծագործական արդյունքի համար: Նախագծային բնույթի աշխատանքներում սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթաց, ինքնուրույն ձևակերպում են ուսումնական խնդիրը, հավաքագրում անհրաժեշտ տեղեկություններ, մշակում խնդրի լուծման տարբերակներ, վերլուծում աշխատանքի արդյունքները, կատարում եզրահանգումներ՝ ձեռք բերելով ուսումնական կենսափորձ [Նավասարդյան 2008, էջ 54-56]: Կրթական համակարգում կիրառվող նախագծերը կարող են լինել՝ բազմառարկայական, միջառարկայական, ներառարկայական:

Նախագիծը թույլ է տալիս գիտական տարբեր ոլորտներից խնդիրների լուծման նպատակով ինտեգրելու այն անհրաժեշտ տեղեկությունները, որոնք պետք է կիրառել գործնականորեն: Որպես գործնական հմտությունները զարգացնող մեթոդ՝ սկզբնականորեն սովորեցնում է մտածել, ապա իրագործել: Նախագիծը ունի հստակ, իրականանալի նպատակներ, առանձնահատկություններից մեկը հանդիսանում է աշխատանքի նախնական պլանավորումը: Ամբողջ ընթացքը՝ սկսած ծագած խնդրից մինչև նախագծի նպատակը, անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խնդիրները, լուծման միջոցները [Лебедева 2002, с.116-118]:

Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը, որպես կանոն, կապված է գրականության և տեղեկատվության այլ աղբյուրների ուսումնասիրության, տեղեկատվության ընտրության հետ, նաև կապված է տարբեր փորձերի անցկացման, գիտափորձերի, դիտումների, հետազոտությունների, հարցումների, ստացված տվյալների վերլուծության, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորված սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծի վերջնական արդյունքը, որը

պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ, բավարարի առաջադրված խնդրի պահանջները:

Իրականացվող նախագծերն ունեն հետևյալ տիպաբանական հատկանիշները՝

- ըստ սովորողների գերակշռող գործունեության (առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային),
- ըստ բովանդակության (միջառարկայական և մոնոնախագծեր),
- ըստ հարաբերությունների բնույթի (ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային),
- ըստ տևողության (մինինախագծեր՝ մինչև մեկ շաբաթ, կարճաժամկետ՝ մինչև մեկ ամիս, միջնաժամկետ՝ մինչև վեց ամիս, երկարաժամկետ՝ կես տարուց ավելի),
- ըստ մասնակիցների թվի (անհատական, խմբային, միջխմբային) [Джонс 2006, с. 89]:

Յուրաքանչյուր դասապրոցեսում արդյունավետ նախագծային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ փուլերով՝

- հիմնահարցի ձևակերպում
- աշխատանքային խմբի (խմբերի) ձևավորում
- աշխատանքի բաժանում
- խմբերի, անհատների ինքնուրույն աշխատանք
- հետազոտություն
- ստացված արդյունքների ընթացիկ քննարկումներ կատարված աշխատանքների ներկայացում:

Նախագծային ուսուցման ժամանակ կարևոր է նախագծի կառույցը, որը ներառում է.

1. Սկզբնական փուլ – նախապատրաստական

Հայեցակարգի վերամշակում . Պատասխանիր հետևյալ հարցին

- Ինչու՞ է ընտրվել հատկապես այս նախագիծը
- Ինչպիսի՞ն է ընթացիկ իրավիճակը
- Ինչպիսի՞ խնդիրներ է լուծում տվյալ նախագիծը
- Ինչո՞ւմ է կայանում տվյալ նախագծի արդյունքը:

2. Հիմնական փուլ – նախագծի պլանի կազմում

- Նախագծի վերամշակում (գործնական և ընհանրացնող)

- Նախագծի ընթացքում կարող են տեղի ունենալ փոփոխություններ:
Կարևորը պլանի ճիշտ իրականացումը չէ, այլ աշխատանքի արդյունավետությունը:

3. Երրորդ փուլ՝ ներդրումային

Նպատակի իրականացման համար հիմնական միջոցառումների կատարում

4. Պարապմունքների համառոտագրի վերամշակում՝ յուրաքանչյուր թեմայով միջոցառումների կառույցը: Պլանի վերահսկում և ուղղորդում:

5. Եզրափակիչ փուլ՝ ամփոփիչ՝ արդյունքների ամփոփում, արդյունքների գնահատում և ուղղորդում [Jeffrey 2003, p. 9-12]:

Նախագծում պետք է առկա լինի՝

- Նպատակ՝ չկա նպատակ-չկա նախագիծ
- Փոփոխություն՝ կրթական գործընթացի փոխանցում ցանկալի իրավիճակ
- Ժամանակի սահմանափակվածություն՝ ցանկացած նախագիծ ունի սկիզբ

և վերջ

- Նախագծի կատարելություն
- Պահանջվելիք արդյունքների սահմանափակվածություն

Նախագծի հիմնական պահանջներն են՝

- Խնդրի առկայություն, որը պահանջում է լուծման որոնում
- Նախագիծը՝ լուրջ խաղ է
- Սովորողի ինքնուրույնություն
- Մեծերի և սովորողների ստեղծագործականություն
- Գիտելիքների գործնական կիրառություն [Jeffrey 2003, p.13-14]:

Թեմատիկ նախագծերը, որոնք միավորում են ճանաչողության բոլոր միջոցները, յուրաքանչյուր սովորողի հնարավորություն են տալիս ընտրելու ճանաչողության այն ուղին, որը իր համար սահմանափակ է:

2. Նախագծային աշխատանքը որպես ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործընթացի արդյունավետ միջոցի ուսումնասիրություն և վերլուծություն

Ինչպես գիտենք ինքնուրույն աշխատանքը ուսումնական գործունեության ձև է, որն ուղղված է սովորողների տեսական գիտելիքների, գործնական և կիրառական կարողությունների խորացմանը, ինքնուրույն աշխատանքի հմտությունների, հետազոտական և մասնագիտական գործունեության կոմպետենտությունների

ձևավորմանն ու կատարելագործմանը, տեսական գիտելիքների պրակտիկայում ստուգմանն ու ամրապնդմանը:

Դասարանում կատարվող յուրաքանչյուր ինքնուրույն աշխատանք ներառում է սովորողի աշխատանքը մասնագիտական, մեթոդական և տեղեկատվական գրականության հետ, դասընթացից հանձնարարվող ստուգողական աշխատանքի կատարումը, ուսուցման ակտիվ, որոնողական հետազոտական, որոնողական և ստեղծագործական բնույթի այնպիսի աշխատանքները, ինչպիսիք են մասնակցությունը դաս-քննարկումներին, գործնական և դերային խաղերին, թեմատիկ բանավեճերին՝ ելույթի, ռեֆերատի, զեկուցման կամ ակտիվ խաղային գործունեության տեսքով և այլն:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործընթացի կարևորագույն մեթոդ է հանդիսանում նախագծային ուսուցումը, որը կարող է կիրառական լինել ինչպես դասարանում դասերի ընթացքում, այնպես էլ դասերից դուրս՝ արտադասարանական աշխատանքներում, նաև տանը:


Ուսումնասիրելու համար, թե որքանով է արդյունավետ նախագծային ուսուցումը որպես ինքնուրույն աշխատանքի մեթոդ՝ մեր կողմից իրականացվել է հետազոտական աշխատանք Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցում, որտեղ թիրախ խումբ են հանդիսացել ուսուցիչները:

Հետազոտական աշխատանքի ընթացքում կիրառել ենք՝ սոցիոլոգիական առցանց հարցման մեթոդը: Ինչպես նաև մեր կողմից իրականացվել է մանկավարժի նախագծային աշխատանքների իրականացման հմտությունների զարգացման թեյնինգ ծրագիր, որի ընթացքում շեշտադրվել է նախագծային աշխատանքներում ինքնուրույն-որոնողական գործունեությունը և ստեղծագործականությունը:


Հետազոտության ընթացքում մեր կողմից առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել՝ արդյո՞ք դպրոցում կարևորվում են նախագծային աշխատանքները և որքանով են արդյունավետ,
- վերլուծել սովորողների ինքնուրույն-որոնողական գործունեությունը և ստեղծագործականությունը նախագծերի իրականացման ընթացքում:


Սոցիոլոգիական առցանց հարցման արդյունքում, որի նպատակն է ուսուցիչների կողմից նախագծային ուսուցման կիրառության ուսումնասիրումը (մասնակցել են թվով 20 ուսուցիչ, տես https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSdDi2XHCH1ea9mpQkb_JRw25RX1TL6pYXs99_dtsVyfOeXyLQ/viewform), պարզեցինք, որ.




Գծապատկերից պարզ երևում է, որ ուսուցիչների 60 տոկոսը կարևորում է նախագծային ուսուցումը, 30 տոկոսը ոչ միշտ է գտնում արդյունավետ, 10 տոկոսը համարում է անարդյունավետ:




Ինչպես երևում է արդյունքներից, հարցվող ուսուցիչների 45 տոկոսը կիրառում է կախված թեմայից, 25 տոկոսը ոչ միշտ է կիրառում, 30 տոկոսը պարզապես նշել է այո:




Ուսուցիչների 88 տոկոսը գտնում է, որ նպաստում է, 12 տոկոսը ոչ այնքան:




Պատասխանի ցուցանիշը վկայում է այն մասին, որ հարցվող ուսուցիչների 85 տոկոսը գտնում է, որ ձևավորվում են գործնական հմտություններ, 15 տոկոսը նշել է ոչ բոլորի մոտ:



Ինչպես տեսնում ենք գծապատկերից՝ հարցվող ուսուցիչների 95 տոկոսը կարևորում է նախագծային աշխատանքների դերը սովորողների ստեղծագործական, ինքնուրույն մտածական կարողությունների զարգացման մեջ, 5 տոկոսը՝ ոչ այնքան:



Չարցվող ուսուցիչների 55 տոկոսը գտնում է, որ սովորողները կարողանում են իրականացնել ինքնուրույն նախագծեր, 40 տոկոսը՝ ուսուցչի ուղղորդմամբ:



Ինչպես երևում է պատասխաններից 10 հոգին գնահատել է 7, իսկ ընդհանուր ցուցանիշներից կարելի է հասկանալ, որ ունենք միջին արդյունավետություն:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից իրականացված հետազոտական հարցումը, պարզեցինք, որ ուսուցիչները արդյունավետ են համարում նախագծային ուսուցումը, սակայն ՀՀ դպրոցի պայմաններում ոչ բոլոր նախագծերն են իրագործելի: Նախագծային աշխատանքներն իրագործվում են կախված ուսումնասիրվող նյութից: Կարևորվում է գործնական հմտությունների ձևավորումը: Նախագծերը նպաստում են ինքնուրույն ատեղծագործական գործունեության զարգացմանը, սակայն ոչ բոլոր սովորողների: Ակտիվացնում է մտածական գործընթացները, խմբային գործունեության ընթացքում ձևավորվում է ինքնուրույն ստեղծագործական մտածողություն: Նախագծերի իրականացման գործընթացում ուղղորդող է ուսուցիչը, չնայած սովորողները դրսևորում են որոշակի ինքնուրույնություն:

Հետազոտության հաջորդ քայլով մեր կողմից կազմվել է թրեյնինգ ծրագիր և իրագործվել է Ազարակի միջնակարգ դպրոցի ուսուցիչների հետ:

3. Մանկավարժի նախագծային աշխատանքների իրականացման հմտությունների զարգացման թրեյնինգ ծրագիր

Նախաբան՝ Ժամանակակից կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն անհրաժեշտ են դարձնում ուսուցչի որակավորման և մասնագիտական կոմպետենտությանն ուղղված գործունեությունը, որտեղ կրթության հիմնական նպատակն է կրթության համապատասխանեցումը անձի,

հասարակության և պետության արդի և հեռանկարային պահանջներին, սեփական երկրի բազմակողմանի զարգացած քաղաքացու պատրաստումը, ով ունակ է հասարակության մեջ սոցիալապես հարմարվողականացվելու, իրականացնելու աշխատանքային գործունեություն, ինքնակրթվելու և ինքնակատարելագործվելու: Իսկ ազատ մտածող, իր գործունեության արդյունքները կանխատեսող և ուսումնական գործընթացը մոդելավորող ուսուցիչն այդ նպատակներին հասնելու երաշխավորն է: Այդ իսկ պատճառով ներկայումս կտրուկ աճել է ուսուցչի որակյալ, ստեղծագործ մտածող, մրցունակ անհատականության պահանջարկը, որը կարող է ժամանակակից, դինամիկ փոփոխվող աշխարհում դաստիարակել անհատին:

Թրեյնինգի նպատակներն են՝

1. Նախագծային աշխատանքների իրականացման մասնագիտական հմտությունների մակարդակի բարձրացում՝ պայմանավորված ուսուցչի անձնական ռեսուրսների զարգացմամբ
2. Նախագծային մեթոդների արդյունավետ կիրառության ուսուցչի մասնագիտական կարողությունների զարգացում և կատարելագործում
3. Մանկավարժի ստեղծագործականության բացահայտում
4. Ուսուցիչների հոգեբանական գիտելիքների մակարդակի բարձրացում:

Վերապատրաստման խնդիրները՝

- Ներկայացնել «նախագծային ուսուցում», «նախագծային մեթոդ», «նախագծային աշխատանք» հասկացությունը և տեսակները.
- Չարգացնել 21-րդ դարի հմտությունները
- Ձևավորել ազատ կարծիքի արտահայտման, արդյունքների ճշգրիտ գնահատման մանկավարժական մոտեցում:

Թրեյնինգի ընթացքում նախատեսվում է կիրառել՝

Նախնական ակտիվացման փուլ

Չիմնական փուլ՝ հիմնական զարգացվող հմտությունների և կարողությունների, այդ որակների ուսուցման, ձևավորման և զարգացմանն ուղղված բուն վարժությունների մասին տեղեկացում: Այս փուլում վարժությունները նախատեսվում է ավարտել նյութի իմաստավորմամբ:

Վերջին փուլ՝ արդյունքների ամփոփում և ինքնաանդրադարձ:

Թրեյնինգի կանոնները՝

Այս խմբի կանոններն են.

1. Համարժեքության կանոն. Չկան կարգավիճակային տարբերություններ, խմբում հիերարխիա, ենթակայություն: Յուրաքանչյուր ոք պատասխանատու է ինչպես իր որոշումների, այնպես էլ խմբային որոշումների համար:
2. Գործունեության կանոնը. Խմբի յուրաքանչյուր անդամի գործունեությունից շահում են բոլորը:
3. Անկեղծության կանոն. Ամեն մեկն ասում է այն, ինչ մտածում է, և ոչ այն, ինչ իրենից (իր կարծիքով) սպասվում է, մինչդեռ ինքն է վստահության չափանիշը սահմանում:
4. Զննարկման ենթակա է միայն այն, ինչ կատարվում է «այստեղ և հիմա»:
5. Գաղտնիության կանոն. Խմբում քննարկված և յուրաքանչյուր մարդու «անձնական» կյանքի պատմությունների մասին տեղեկատվությունը շրջանակից դուրս չէ:
6. Կառուցողական հետադարձ կապի կանոն. Խոսքը վարքագծի մասին, ոչ թե անհատականության: Վարքագծային վերլուծությունը պետք է մանրամասնվի ըստ դրվագների, այլ ոչ թե ընդհանրացված չտարբերակված եղանակով:
Այս կողմերի (կանոնների) պահպանումն անհրաժեշտ է թրեյնինգի նպատակին հասնելու և հարմարավետ հոգեբանական մթնոլորտ ստեղծելու համար:

Ի՞նչ եմ ակնկալում թրեյնինգից

«Իմ սպասումները»

Մասնակիցները գունավոր թղթերի վրա գրում են իրենց սպասումները, կարևոր է, որ ամեն գույնի թղթի վրա գրվի միայն մեկ ակնկալիք: Թղթիկները գրվածը ընթերցվելու է թրեյնինգի ավարտին:

Հաջորդիվ թրեյնինգը վարողի կողմից ներկայացվում է.

Անձի ներուժ հասկացությունը, որը մարդու կարողությունն է՝ բազմապատկելու իր ներքին հնարավորությունները, առաջին հերթին՝ զարգանալու կարողությունը:

Անհատի ներուժը, որը հարուստ ներաշխարհով ապրելու և շրջակա միջավայրի հետ արդյունավետ փոխազդելու, արդյունավետորեն ներազդելու, հաջողությամբ աճելու և զարգանալու կարողությունն է:

Անհատականության կայացում՝ դրդապատճառները, իրական ձգտումները:

Անհատականության կողմնորոշում՝ «գերակշռող շահեր և ձգտումներ», «դրդապատճառների հիերարխիա», երբեմն՝ անձնական գաղափարախոսություն:

Անձնային ուղղվածությունը՝ մարդուն իրապես ներքնապես հոգեհարազատ է, ինչին նա ձգտում է իրատեսական նպատակներով:

Թրեյնինգավարի ներկայացումից հետո մասնակիցներին ներկայացվում է

«Գիտելիքը փորձի հետևանք է»

«Գիտելիքը փորձի հետևանք է», - ասում է շվեյցարացի հոգեբան Ժան Պիաժեն: Գործով սովորելը մարդկության քաղաքակիրթ նվաճումները յուրացնելու ամենաարագ ճանապարհն է: Մարդիկ ամեն օր բախվում են բազմաթիվ խնդիրների իրական աշխարհում: Իսկ իրական խնդիրների լուծումը զարգացման հիմքն է: Այսպիսով, եթե մենք պատրաստում ենք սովորողներին կյանքում հաջողության հասնելու, պետք է սովորեցնենք նախագծային աշխարհի միջոցով: Նախագծային աշխատանքը կապում է սովորողներին իրական աշխարհին:

Ապա ուսուցիչներին առաջարկվում է բաժանվել երկու խմբի և համապատասխանաբար յուրաքանչյուր խումբ ներկայացնում է ինչպես է տեսնում նախագծային աշխատանքի կապը կյանքի հետ:

Չաջորդիվ թրեյնինգավարի կողմից ներկայացվում է՝

Ի՞նչ է նախագծային ուսուցումը

Նախագծային ուսուցումը կամ խնդրի վրա հիմնված ուսուցումը, սովորողակենտրոն ուսուցման մեթոդ է, որը թույլ է տալիս սովորողներին ընդլայնել իրենց գիտելիքների բազան և զարգացնել հմտություններ նախագծի իրականացման միջոցով՝ լուծելու այն խնդիրները, որոնց կարող են հանդիպել իրական աշխարհում: Ծրագրային ապահովումը կառուցում է ուսումնական ծրագիրը դիսկրետ նախագծերի շուրջ, սովորողներին ներկայացնում է լուծելու բազմաքայլ խնդիր կամ նրանց տալիս է դժվար հարցեր, որոնց պետք է պատասխանել: Այս նախագծերը կարող են լինել մեծ կամ բարդ, ուստի կարևոր է ուսուցիչների կողմից ճիշտ և ստեղծագործական մոտեցումը: Նախագծային աշխատանքները ձգտում են խթանել համագործակցության հմտությունները: Սովորողները, աշխատելով զույգերով կամ խմբերով, կատարում են հետազոտություն, վերլուծում են տեղեկատվությունը և ինքնուրույն եզրակացություններ անում: Արդյունքում նրանք ավելի խորն են սովորում բովանդակությունը և ձեռք են բերում ժամանակակից աշխարհում անհրաժեշտ տարբեր հմտություններ:

Ծրագրի վրա հիմնված ուսուցման առավելությունները

Ծրագրային ապահովումն ավելին է, քան պարզապես նախագծերը: Նախագիծը ուսուցման համար անհրաժեշտ կարևոր գիտելիքների և հմտությունների փոխանցման միջոց է: Այլ կերպ ասած, ուսուցիչը առցանց դասասենյակում անգամ սովորողների համար հանդիսանում է ուղղորդող, սովորողները՝ հետազոտողներ (թվային) կամ սեփական նախագծերի գնահատողներ:

Այսպիսով, ծրագրային ապահովման ո՞ր առավելությունները պետք է այն դարձնեն կրթության նոր ուղղություն:

1. Սովորողներին կապել իրական համատեքստին

Կրթության մեջ գիտելիքի կիրառումը գործնականում ցանկացած սովորողի կարևորագույն խնդիրներից է: Ակնհայտ է, որ փաստաթղթեր կամ գրքեր կարդալը միշտ ավելի դյուրին է, սակայն նախագծային աշխատանքները, ծրագրային ապահովումը սովորողներին առերեսում է աշխարհում տիրող իրական իրավիճակին, թույլ տալիս մոդելավորել: Խնդրի լուծում գտնելու համար նրանք պետք է ճիշտ հարցեր տան: Այնուհետև գտնեն համապատասխան տեղեկատվություն, իրական իրավիճակի վերաբերյալ հարցում անցկացնել և վերլուծել ստացված տվյալները:

Ապա մասնակիցներին առաջարկվում է նախագծային թեմայի օրինակ՝ «Շրջակա միջավայրի պաշտպանություն»՝ «Ինչպե՞ս նվազեցնել պոլիէթիլենային տոպրակների օգտագործումը» հարցով:

Եվ տրվեց առաջադրանք՝ ի՞նչ պետք է անել:

Մասնակիցները պետք է իրագործեն փոքր խմբերով քննարկումներ և կապելով իրական օրինակների հետ գտնեն լուծումներ:

Օրինակ՝ պետք է հարցում անցկացնեն այն մասին, թե ինչպես են տեղի բնակիչները օգտագործում պլաստիկ տոպրակներ, վնասակար ազդեցությունները և ինչպես նվազեցնել օգտագործումը: Արդյունքում կապվում են իրական կյանքի հետ, և ոչ միայն տեսության: Արդյունքում սովորողները աշխատանքի ընթացքում ձեռք են բերում գիտելիքներ և պահպանում են դրական վերաբերմունք կրթության նկատմամբ: Նախ՝ նրանք կաշխատեն անհատապես՝ տվյալներ ստանալու համար: Այնուհետև կարող են միասին աշխատել առցանց կամ դասարանային միջավայրում՝ տեղեկատվություն փոխանակելու, քննարկելու և նախագիծն ավարտելու համար: Այս միջավայրերն ապահովում են լրացուցիչ ճկունություն ժամանակի և տարածության մեջ: Այս երկու կարևոր ռեսուրսները հաճախ սահմանափակվում են դեմ առ դեմ դասասեսնյակում, ուստի նպատակահարմար է կիրառել ծրագրայինը:

21-րդ դարի հմտությունների զարգացում

Ուսանողներին աշխարհին պատրաստելը հեշտ գործ չէ ոչ մի մանկավարժի համար: Կրթության պատմության մեջ չկա այնպիսի ուսանող, ինչպիսին այսօրվա ժամանակակից ուսանողն է: Զանի որ ժամանակակից աշխարհը արագ զարգանում է, հրամայական է, որ երեխաները զարգացնեն հմտությունների մի շարք, որոնք կարող են պահանջարկ ունենալ քոլեջում, համալսարանում և աշխատանքում: Այս

հմտությունները կոչվում են 21-րդ դարի հմտություններ և դրանք կարելի է ձեռք բերել նախագծային աշխատանքների միջոցով՝

- քննադատական մտածողություն;
- ստեղծագործականություն;
- համագործակցություն;
- հաղորդակցություն;
- տեղեկատվական գրագիտություն;
- մեդիա գրագիտություն;
- տեխնոլոգիական գրագիտություն;
- ճկունություն;
- ղեկավարություն;
- նախաձեռնություն;
- կատարողականություն
- փոխներգործունություն:

Նախագիծն ավարտելիս սովորողները կարող են մտածել շրջանակից դուրս: Միաժամանակ աշխատել ուրիշների հետ, համաձայնության գալ, սովորել, թե ինչպես արդյունավետ կերպով փոխանցել գաղափարները տարբեր անհատականությունների տեսակների միջև և այլն: Բացի այդ, խնդիրը լուծելու համար սովորողները պետք է հասկանան փաստերը, վերլուծեն վիճակագրությունը և ամփոփեն հավաքագրված տվյալները: Հաջողության հասնելու համար նրանք պետք է գրագետ օգտագործեն համակարգիչը: Այլ կերպ ասած, նախագծային աշխատանքում կարևոր է ծրագրային ապահովումը, որն օգնում է սովորողներին զարգացնել գիտելիքների ինտենսիվ, բարձր տեխնոլոգիական հասարակության մեջ ապրելու հմտություններ: Վերոնշյալը կնպաստի հետագայում հեշտությամբ լուծել ցանկացած խնդիրներ: Ավելին, սովորողները դառնում են ավելի իմաստուն, ավելի արդյունավետ կերպով հարմարվում իրենց շրջապատող աշխարհին:

Ապա մասնակիցներին առաջարկվում է 1-10 բալային համակարգում գնահատել վերոնշյալ հմտությունները, որոնք կարող են զարգանալ նախագծային աշխատանքի միջոցով:

Հաջորդիվ ներկայացվում է՝
Ձեր կարծիքի արտահայտումը

Սովորողների համար կարծիքն արտահայտելը նախագծային աշխատանքում զգալի առավելություն է: Անկասկած, մենք բոլորս ունենք ինքնաիրականացման կարիքներ, ըստ Աբրահամ Մասլոուի: Նա բացատրում է, թե ինչու են մարդիկ միշտ ցանկանում իրենց կարծիքն արտահայտել ուրիշներին: Եթե սովորողները չեն կարողանում օգտագործել սեփական դատողությունը խնդիրը լուծելիս և հարցին պատասխանելիս, նախագիծը վերածվում է սովորական վարժության: Նախագծային աշխատանքներում սովորողները կարող են վերահսկել հետազոտությունների միջոցոցով իրենց առաջադրած հարցերը, տնօրինել ժամանակը, ռեսուրսները, համագործակցել թիմում:

Աշակերտի արդյունքների ավելի ճշգրիտ գնահատում

Նախագծի միջոցով սովորողները կարող են գնահատել իրենց կարողությունները, դիտարկել, հավաքագրել, վերլուծել և սինթեզել տվյալները:

«Մենք դասեր չենք քաղում սեփական փորձից: Մենք սովորում ենք՝ մտածելով փորձի մասին» (Ջոն Դյուլի):

Առաջարկվում է մեկնաբանել միտքը:

Եվ ի վերջո վերջին քայլով առաջարկվում է կառուցել ծառ, որի յուրաքանչյուր ճյուղին գրվում է նախագծի իրագործման փուլերը, քայլերը, տեսակները:

Վերջում մասնակիցները վերցնում են տարբեր գույների մի քանի կաչուն պիտակներ: Կանաչ պիտակի վրա նրանք պատասխանում են «Ի՞նչ սովորեցի» հարցին: Դեղին կաչուն պիտակների վրա - «Ի՞նչ հատկապես սա պետք կլինի» հարցին: Կարմիրի վրա - «Ի՞նչ սա պետք չի՞ լինի»: Լրացնելուց հետո համեմատվում են սկզբում գրված թղթերի սպասելիքները վերջնաարդյունքի հետ, ընդ որում յուրաքանչյուր գույնի վրայի գրվածը այդ գույնի պիտակի հետ:

Այսպիսով, թրեյնինգը, որը մեր կողմից անցկացվեց նախագծային և փոխներգործուն մեթոդների համակցվածությամբ, կարծում ենք հաջողված էր, քանի որ ներգրավված էին բոլոր մասնակիցները և ցուցաբերեցին ակտիվ համագործակցային մասնակցություն:

Թրեյնինգի ընթացքում կարողացանք փոխանցել նախագծային աշխատանքների իրականացման ինքնուրույնության հետևյալ մակարդակները.

- **Ճանաչողական՝** ինքնուրույն աշխատանք, որի նպատակը նոր գիտելիքների ձեռքբերումն է: Ընդ որում, աշակերտի իմացական գործունեությունն արտահայտվում է ընկալելու, հասկանալու և հիշելու մեջ:

- **Վարժեցնող`** ինքնուրույն աշխատանք, որի նպատակը գիտելիքների ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումն է, իսկ աշակերտի գործունեությունն իրականացվում է ըստ օրինակի. խնդրի լուծում, աղյուսակի, սխեմայի լրացում և այլն, մեր դեպքում S-աձև աղյուսակ
- **Վերարտադրողական`** ինքնուրույն աշխատանք, որի բովանդակությունը առաջադրանքի վերափոխումն է պլանի, թեզիսի, համառոտագրության: Նշենք, որ ռեֆերատը վերարտադրողական ինքնուրույն աշխատանք է:
- **Կիրառական`** ինքնուրույն աշխատանք, երբ գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառվում են գործնական խնդիրներ լուծելու նպատակով:
- **Ստեղծագործական`** ինքնուրույն աշխատանք, որի բովանդակությունը պրոբլեմային իրավիճակի վերլուծությունն է, նոր գիտելիքների ձեռքբերումը, նոր կարողությունների և հմտությունների ձևավորումը (ուսումնական հետազոտական առաջադրանք, կուրսային և ավարտական որակավորման աշխատանք):

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով մեր կողմից իրականացված աշխատանքի տեսական և գործնական հատվածները հանգեցինք հետևյալ եզրակացությունների՝

- Նախագծային աշխատանքը թույլ է տալիս անհատականացնելու ուսումնական գործունեությունը, սովորողներին հնարավորություն է տալիս դրսևորելու ինքնուրույնություն իրենց գործունեության պլանավորման հարցում:
- Նախագծային մեթոդի առանձնահատկությունն այն է, որ ուսուցումը կազմակերպվում է սովորողների նպատակային գործունեության միջոցով, ընդգծվում է կապը կյանքի և առօրյայի հետ. մեթոդի ուսումնասիրության հիմնախնդիրները բխում են իրական կյանքից:
- Նախագծային ուսուցումն իբրև արդյունավետ ուսումնառության գաղափարի գործնական իրականացում ապահովում է սովորողների հմտությունների, կարողությունների զարգացումը, տեղեկատվական դաշտում ճիշտ կողմնորոշվելու, քննադատական մտածողության զարգացումը:

Իրականացված հետազոտության արդյունքում պարզեցինք, որ.

- Ուսուցիչները կարևորում են նախագծային աշխատանքների դերը ուսումնական գործընթացում, գտնում են, որ դպրոցի տեխնիկապես հագեցված լինելու դեպքում արդյունավետորեն և ստեղծագործաբար կարող են կիրառել, սակայն դպրոցի սահմանափակ ռեսուրսների դեպքում ոչ միշտ է արդյունավետ:
- Ինքնուրույն նախագծային աշխատանքների միջոցով հնարավոր է բացահայտել սովորողների անձնային ռեսուրսը, ակտիվացնել ճանաչողական, մտածական, ստեղծագործական կարողությունները, դրդել ինքնուրույն բազմաբնույթ որոնողական գործունեության, փաստերի համադրման և տրամաբանական հետևությունների դուրսբերման:
- Իրականացված թրեյնինգը ցույց տվեց, որ արդյունավետ է ուսուցիչների վերապատրաստման գործընթացում, փոխհամագործակցությամբ նոր գիտելիքների ձեռքբերման մեջ: Թրեյնինգի ընթացքում կարողացանք ապահովել անհրաժեշտ ճանաչողական, վերարտադրողական, ստեղծագործական, կիրառական մակարդակները:

- Այսպիսով, սովորողների ընտելացումը գիտահետազոտական որոնողական գործունեությանը՝ հանդիսանում է ժամանակակից դպրոցում լավագույն ձևերից մեկն է, որը թույլ է տալիս առավել լիարժեքորեն բնորոշելու և զարգացնելու ինչպես մտավոր, այնպես էլ պոտենցիալ ստեղծագործական ունակությունները յուրաքանչյուրի մոտ անհատապես:

Առաջարկում ենք՝

- Նախագծային աշխատանքների կիրառության ժամանակ անպայմանորեն հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի առանձնահատկություն և դասը կառուցել համապատասխան համագործակցային և փոխներգործուն մեթոդների հիման վրա: Առավելապես շեշտադրել խմբային աշխատանքի և փոխօգնության կարողությունների զարգացումը:
- Սովորողների մոտ ինքնուրույն աշխատանքի միջոցով խթանել ոչ միայն իրենց ակտիվ գործունեությունը, այլև զարգացնել վերարատադրողական կարողությունները:
- Ուսուցիչներին անհրաժեշտության դեպքում իրականացնել թրեյնինգ վերապատրաստումներ, կարևորել փորձի փոխանակումը: Ուսուցչի աշխատանքի մեջ նախագծային ուսուցման ժամանակ կարևորել՝ աշակերտներին հետ խորհրդատվության անցկացումը, խմբային գործունեության խթանումը, համագործակցությունը և ինքնուրույն-որոնողական գործունեությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սուսաննա Նավասարդյան, Լիդա Սահակյան (2008), Նախագծային մեթոդը որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, Մանկավարժություն, 1/2
2. Джонс Дж. К., (2006), Методы проектирования / Дж. К. Джонс: пер. с англ. – 2-е изд., доп. М.: Мир
3. Лебедева Л. И., Иванова Е. В., (2002), Метод проектов в продуктивном обучении, Школьные технологии., Москва , №5.
4. Солдатова А.А. (2000), Творческое самовыражение как педагогическое средство подготовки будущего учителя к инновационной деятельности: автореф. дис. ... канд. пед. наук. Иркутск.
5. Сергеев И.С. Как организовать проектную деятельность учащихся: практическое пособие для работников общеобразовательных учреждений. М.: АРКТИ, 2008 <https://www.twirpx.com/file/483321> 01.10.2022; 18.00
6. Технология проектов в профессиональной деятельности педагога <http://dspace.kgsu.ru/xmlui/bitstream/handle> 02.10.2022; 19.24
1. Jeffrey Froyd, Nancy Simpson, (2003), Student-Centered Learning Addressing Faculty Questions about Studentcentered Learning, Jeffrey Froyd, Nancy Simpson, http://ccliconference.org/files/2010/03/Froyd_Stu-CenteredLearning.pdf 03.10.2022. 16.25

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Մանկավարժական վերապատրաստման ծրագրի հետազոտական աշխատանքի համար ինդրում ենք պատասխանել ստորև նշված հարցաշարին: Գաղտնիությունը երաշխավորվում է:

Արդյունավետ էք համարում նախագծային ուսուցումը

այո

ոչ

չգիտեմ

ոչ միշտ

Իրականացնո՞ւմ էք արդյոք նախագծային աշխատանքներ

այո

ոչ

ոչ միշտ

Կախված ուսումնասիրվող նյութից

Կարծո՞ւմ եք, նախագծային աշխատանքները զարգացնում են սովորողների

ինքնուրույն գործունեությունը

այո

ոչ այնքան

ոչ

Արդյո՞ք նախագծային ուսուցումը ձևավորում է սովորողների մոտ գործնական

հմտություններ

այո

ոչ

ոչ բոլորի մոտ

Կարծո՞ւմ եք, որ նախագծային աշխատանքը սովորողներին ընձեռում է

ստեղծագործական, ինքնուրույն մտածական կարողություններ

այո

ոչ

ոչ այնքան

Կարողանո՞ւմ են աշակերտներն ինքնուրույն իրականացնել նախագծեր

այո

ուսուցչի ուղղորդմամբ

ոչ

Որքա՞ն կգնահատեք նախագծային ուսուցման արդյունավետությունը սովորողների գործունեության մեջ (1-10 բալային համակարգում)

1

2

3

4

5

6

7

8

9

10